

րանք պիտի դնեմ, որ 23 օր կընէ, անկէ վերջը եկուր որ արձակումդ առնես .

5 օր շարունակ Թախսիմին ճատ տէն պիտի կայնիս, սաստիկ հով եղած օրերը :

8 օր պողազաճառ Կարսիկնեքէն առուտուր պիտի ընես, սաստիկ սակարկութեամբ :

1 օր ամբողջ Իւսկիւտարի օմնիւ պիտի առանց բնաւ վար իջնելու պիտի երթնեկես :

3 օր Ղալաթիյ պօրսան պիտի երթաս կայնիս :

6 ամիս ձմեռը Բանկալդի պիտի նստիս և անկից ամեն օր ոտքով մինչեւ սենեակդ պիտի գաս :

Ահա այն ատեն կատարեալ ապաշխարած կըլլաս և արձակումդ կրնաս առնուլ :

— Տէր իմ, թէ և այդ դրած ապաշխարանացդ ամենն ալ չափէն աւելի ծանր են բայց ինչ ընեմ, քանի որ դուք այսպէս կը հաճիք՝ ակամայ ստիպուած եմ ընդունիլ բացի մէկէն, կաղաչեմ տէր իմ, սա պարսկաց հետ առուտուր ընելու ապաշխարանքը ինծի սոսկում կը պատճառէ կոր :

— Ինչո՞ւ :

— Վասն զի ստակովս հէմ քիւր պիտի լսեմ հէմ ալ ծեծ պիտի ուտեմ :

— Եւ, ի՞նչ հասկը ցար թշուառական, քու գործած յանցանքներուդ քով դեռ ասոնք զրօյի մը չափ ծանրութիւն չունին, հապա ի՞նչ, կուզէիր որ մինչև ցարդ ազգին դէմ գործած այնչափ չարքներուդ թըշուառ անկեալի մը դէմ ըրած այնչափ զրպարտանաց և նախատանացդ խուլ ըլլալով դքեղ չգատժէի. դուն երբեք թողութեան արժանի չես, բայց սողայութեանդ խղճալով այս անգամ այսչափ ապաշխարանք դնելով բաւ կը համարիմ :

— Կաղաչեմ, կը պաղատիմ, տէր իմ, ուրիշ ապաշխարանք մը դիր աւոր տեղը, կընդունիմ :

— Ուրեմն չուտ ըրէ, գնա սենեակդ գլխիդ ժողված խմբագիրներդ ցրուէ, վերջացուր թերթիդ հրատարակութիւնը, այսչափ աներեսութիւն, զէվզէկութիւն և խայտառակութիւն կը բաւէ, հայտէ ել նայիմ, Ստուռած պէլատ սոյ :

— Ենորհակալ եմ :

ՍՈՅԼ

Ռուսաստանցի եղբայրներէն Պ. Ամերիկեան՝ Ա. բաճարցակ դերասան նենգաւոր մատերու, միտք ունի եղեր, կըսեն, այս տարի Օրթագիւղի Թատրոնը վարձու բռնելով Ռուսիոյ Հայոց կեանքին վերաբերեալ Թատրերգութիւններ ներկայացունել :

Այս դերասանը Պալիս ոտք կուտած օրն անոր ասոր ըսաւ թէ ինք Ռուսի Հայոց կեանքում վերաբե-

րում քանի մը Թատրերգութիւններ պիտի տայ ու պիտի մեկնի :

Աս ըսելէն ետքն ելաւ Շիրէրի «Աւագակները» ներկայացուց .

Եթէ այս է Ռուսի Հայոց կեանքը՝ ամենքն ալ կոխողան հանելով կախելու է որ մէյ մ'ալ աւաղակութիւն չընեն . Պ. Ամերիկեանին ալ մէկ ոտքը կտրելու է որ չկարենայ մէյ մ'ալ աւագակի դեր կատարել :

Կրօնական Ժողովն Ամբոսիոս վարդապետին իրամն կարգաւով ըսեր է թէ՛ այդ իրամով աշխարհական մը կրնայ արգարանալ բայց կրօնական մը ոչ :

Ահա հիմայ խնդիրը լուսաբանվեցաւ :

Հիմայ խնդրոյն մէջ սա կէտը նկատողութեան առնելու է թէ՛ Ամբոսիոս վարդապետն այս պարագային մէջ իբր աշխարհական վարված է՝ չէնէ իբր կրօնական :

Եթէ իբր աշխարհական վարված է՝ արգարացած է ըսել է, իսկ եթէ իբրեւ կրօնական վարված է՝ կը ցաւինք իբրեւ աշխարհական վարված չըլլալուն վրայ :

Մինչև որ Կրօ. Ժողովն իւր վերջին չտայ, այս խնդրոյն վրայ չպիտի խօսինք .

Համամեծեանի հաղար ոսկինոց սէրկիին խնդիրն ինչորեան էֆէնտիին շնորհիւ անգուժելի ըլլալ սկըսեր է :

Խնդիրը պարզ է խնդրեանի պէս . եթէ Համամեծեանն այդ սէրկին ազգին յանձնած է ինչո՞ւ տուած ստորագրութիւնը ետ չէ առեր, եթէ այդ «էֆէնտի» ուրիշին տուեր է՝ ինչո՞ւ համար ազգին ոտորագրութիւն տուեր է :

Մէկու մը հաղար զրուշի «էնկ» մը տալ, և երբ պարտատէրն իւր առնելիքն ուզէ՝ պատասխանել թէ՛ ես քեզի պարսք չունիմ, որովհետեւ ես այդ հաղար զրուշը ուրիշին տուի : Որո՞ւ հրամանաւ արվեր է : Գրված չէ որ հրամանաւ ըլլայ :

Տեսնենք Թրնիլըն ինչպէս պիտի ելնէ այս խնդրոյն մէջէն :

Շատեր կը գուշակեն թէ՛ Թրնիլըն այս խնդրէն՝ այն փիճակին մէջ պիտի ելնէ . ինչ փիճակին մէջ որ մտաւ Ս. Յակոբայ եկեղեցին ասկից քանի մը տարիներ առաջ :

Սպասենք :

Օրագիր ազգին միութեան կապերը իրարու կապած միջոցին մէկը դալով կըսէ թէ այդ աշխատանքիդ համար քեզի 15 ոսկի պիտի դար չէ կաւ : Ասոր վրայ ան ալ դող ելելով չուանը ձեռքէն կը փախչի :

Սոյն միջոցին Մամուլ վրայ հասնելով քիչ մը կօգնէ թէ և ձեռքէն չգար և հաղիւ հաղ կարկտաններով քիչ մը կը կարեն կը կապեն : Մամուլ

ալ այս ըրածը ապացուցանելու համար Օրագրի ընտիր յօդուածը կը մեկնէ բառ առ բառ և թերթին մէջ կը գնէ :

Ազգին նաւուն զէկն ալ որ վարչութեան ուղարկութիւն չընելէն օրագրի կակուղ փայտէ շինուած է եղեր կըսեն ժայռի մը զարնուելով կտորեր է :

Օրագիր թէ և շատ ջանացեր է նաւը չնստեցնելու, բայց Մամուլ անհմուտ ըլլալով նաւարկութեան, որովհետեւ այսչափ ատեն ժամանակը անառակութեամբ կանցնէ կոր . և լսածնուս նայելով Փափաղեան ալ նաւաստեաց թռչակը իւր քով պահելով վճարած չէ ուստի «նաւն ի բախմանէ վայրենի արեաց» բաւական փնտտուեր է և վարչութիւնը այս օրերս զայն նորոգելու մտադիր է եղեր որովհետեւ

Մշտ Ս. Կարապետի վանքը աւարդի հանուելով Մամբրէ եպիսկոպոսին վրայ մնաց :

Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ :

Խմբագիր

Կաղաչեմ հաճեցէք երկոտղս հրատարակել .

Ձեր օգոստոս 22 թերթին մէջ տեսայ որ Պ. Ս. Խ մը կատարեալ արհեստաւորի մը Թատրոնէն պալ կասութիւնը դգալէ, վշտանալէ ետքը, հրապարակ ելեր, յօդուտ և ի պարծանս փառքին վարդավեան է ֆէնտիի դրիչ մաշեցուցեր է : Ես զՍ. Խ. չեմ ձանջնար, բայց կըսեմ որ ինքզինքը ասանկ երկու աննշան դրերու տակ ծածկող վախկոտ մը գոցարձակ դերասան է և բացարձակի մը վրայ դիտողութիւն ընելու անկարող : Պարոն Ս. Խ. ես եմ բացարձակ դերասանը վասն զի երկու աննշան դրի տակ պահուելով խօսելու չեմ գիծանիր :

Այդ դրած նամակիդ ոգին ես գիտեմարդէն . (նոյն գիշերը բուռն ծափահարութեամբ ընդունուած) Լիոնի Սուրհանդակ խաղին ներկայացման հետեւեալ օրը այդ քու գոված ու պաշտպանած կատարեալ արհեստաւորին մտերիմներէն մէկ քանին վարդավեան էֆէնտիին բացատրած էին . գովելի ոգի մը չէր : Շատ կը ցաւիմ Պարոն Ս. Խ. երբ անգիտաբար բան մը գրելու կը համարձակիս կամ գիտութեամբ սուտ խօսելու կեցնես . կըսես թէ Մնակեան առաջին անգամ բացարձակ դէր կը կատարէր . վայ, Ս. Խ. վայ . միթէ Հաւատք, Յոյս, Սէրի մէջ Այգերթը, Երկու Յիսնապետի մէջ Գուլիլմոսի : Փոքր Փոլոնիոյ մէջ Լիւսիէնի, Փարիզու աղքատաց մէջ Բիէր Պէրնիէի ևն . դերերը գոցարձակ էին :



Ընդհանուր որսորդութիւն

ՀԱՐՑ ՊԱՏԱՍԻԱՆ

— Տիկինս, խառնելու օրհորդք Մեծհիւրտար բիացա ընելու համար ինչո՞ւ կուգեն որ բավարէնին ապուշ ըլլայ :

— Որպէս զի անդիէն եկող գաւառիկներուն՝ պօնսուառ միւսիւ ըսելով կռնելի վրայ ձգելու չափ ոյժով թե կարենաւ կարող ըլլան :

— Օրհորդք ինչո՞ւ նախ մայրերնին խրկելով իրենք վերջը մինակ ծովու բաղնիք կերթան :

— Որպէս զի . . . էֆէնտիին բաղնիքին վրայէն թէմէլահ ընելու կարող ըլլան :

— Օրհորդք ժամը քանիին պառտահանը իրենց վախճի կընեն :

— Օրհիլ Գիթուէի անտանելի օպնիւպիւսը իրիկուան երթեւեկը սկսելուն պէս :

— Սիրտ ետ գալու ամենէն զօրաւոր դեղը ո՞րն է :

— Մ'ամուլը :

ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Կրօն . Ժողովոյ հրտարակած որոշմանց ԺԲ . երրորդ էջովումէն մէջ Հայաստանեայ եկեղեցւոյ և Կաթողիկէ եկեղեցւոյ անունները լսեցինք :

Ուստի խոնարհաբար կը հարցընեմք Կրօն . պատկառելի Ժողովոյն թէ որո՞նք են այդ եկեղեցիները և մենք որո՞ւն կը վերաբերինք :

Ասոր պատասխանին անհամբեր կսպասենք :

— Զանա՞մ նազիք չտուտու : ա .

ճապա ինչ ընեմ, շաշմիշ եղեր մնացերեմ . աա կիտէրէք կառնընայ կոր . վարժապետ չի մնաց լալթըն . աղաներուն ետքար էղայ կէնէ տընել տուի . օր մը կերթայ , մէկալ օր չերթար . ալ հատա . պարի հարը օխջ ըլլար , կէնէ անկէ կը վախնար :

— Քա որի՞ համար կըսես կոր . չեմ հասկընար :

— Տըղուս համարեմ . բէք հաւարիցաւ մարիկ :

— Քա հոգի պիտէ մընէր . քեզի պան մը զուրգեմ տէ անանկ ըրէ :

— Քուզում քուրուկ . լըուրցէ ինչէն նէ խայիլեմ :

— Օրը 6-7 լըուրուշ տուր ափը . առտու իրիկուն Հայտար փաշաէն չըմէնտըֆէն նստի Խառնալ էրթայ . իրկըլան թող կայ . նայէ ինտոր թէր պիտէ կըլլայ :

— Անտեղ վարժապետ կայ ինչ կայ :

— Հըմ , մարդը անանկ կը չախեն կոր քի էնտին պէնտին կըլլաս , սա աշվընին կը տառցունէն տէ . բալք պուռտա ըսած առնենին լէղիթ կը բըթի . քա սալթ պիտէ թառնելուէ գիտէ թը իրեն ծարք կուտայ :

— Իմինըս ինչ կեղծաւոր է քի , հոն էրթանէ անանկ խելօք կը նստի քի ան չէ կըսես :

— Թող պան մը չընէ , մէմուռէնք տէյի աշվընին քէստիրմիշ ըրածնին անանկ պաներ կընեն քի . խաճաման կընիկ եմ , հանկըսընա օթուրաճայրմ տէյի հարցուցի . քա մարիկ թէվէս պըռնէ անանկ , անդին հըրէ քի ինչ ըլլալ չիգիտցայ անոր համար կըսեմ քի մուլթախ թէրպիտէ կըլլայ հիչ հոգ մընէր :

— Վույ քուրուկ եանի ըլլա եա հիչ չիտիտի մուռամ էյիկի :

— Ան կըլլայ իշալահ : չիլէդ լէցած է՝ արթըն Աստուած էրէսիդ բըսած ջուրին ողորմի :

ԾԱՆՈԹՈՒՆՔ

ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԵՂՆՈԿ

ԳԵՌԳ ԱՅԼԱՆԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ ՓԱՐԻՋՈՒ ԷՔՕԼ ՍԱՆԹԱԼԻ

Այս պատուական դասագիրքը կը ծախուի ի գրատան Փարիզու Չաքմաքճըրար եօգուշու թիւ 6 : Յակօբեան խան թիւ 13 . և ուրիշ գրաւաճառաց քով :

Գին 2 ֆրանք 50 սանթիմ .

Սուլթան համալին դիմացը Եէնի ճամբին ճատտէն 4 թիւ խանուլթը ճամպազ Օննիկ եուվարաբեան նոր տեսակ գիւտերով , գոհացուցիչ գինով և սուղ միջոցի մէջ ամէն տեսակ ֆէս կը ներկէ :

Յաճախորդք կընան զայս ստուգել այս արուեստագէտին յաջողակութեանը փորձն անգամ մը առնելով :

ՏԷՐԼՐԱԳՐՈՅՍ

Յ . Յ . ՊԱՐՈՆԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ

Ս . ԹԷՐԱԿԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԻՀԷՆՏԻՍԵԱՆ
Կ . ՊՕԶԻՍ ՎԷՋԻՐ ԽԱՆ ԳԵՄՆԱՅՈՐԿԻ ԹԻւ 50